

ԱՖՂԱՆՍՏԱՆԻ ԷԹՆԻԿ ՀԱՄԱՊԱՏԿԵՐԻ ԱՌՆԱԶՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վլադիմիր Պողոսյան

Մուտք

Աֆղանստանում և աֆղանական հասարակության շուրջ ընթացող գործընթացների համաչափությունը, հասարակական, կրոնական և քաղաքական տարրերի առկայությունը, յուրօրինակ ուսումնասիրության առարկա է ժամանակակից Աֆղանստանի նույնօրինակ գործընթացները ամբողջական և հիմնային պատկերելու համար: Ելնելով Աֆղանստանի բնակչության բազմէթնիկ համակազմից՝ ցանկացած ներքին հակամարտություն այստեղ ստանում է էթնիկական հարթություն, ինչը, բնականաբար, խոչընդոտում է այս երկրում միասնական հասարակական օրգանիզմի ձևավորման գործընթացին:

Ժամանակակից Աֆղանստանում ազգային-էթնիկական բնույթի հիմնախնդիրները բազմաթիվ ու բազմազան են և անմիջականորեն ազդում են ներքաղաքական և արտաքին քաղաքական դրսևորումների ու գործընթացների վրա: Քաղաքացիական պատերազմի երկատևությունը, ազգամիջյան հարաբերություններում առկա հակասությունների ընդգծվածությունը, խմբային-կլանային հարցակարգավորումների մշակույթի առկայությունն արդիականություն է հաղորդում Աֆղանստանի էթնիկական գործընթացների ուսումնասիրությանը: Աֆղանական էթնո-քաղաքական գործընթացներում առկա են բազմաթիվ անհայտներ, իրավիճակային հիմնահարցեր, որտեղ կարգավորման հեռանկարը ոչ միայն բացակայում է, այլև ստեղծում հակամարտության նոր տարրեր:

Հոդվածի նպատակն է համապարփակ ուսումնասիրության ենթարկել Աֆղանստանի էթնիկ համապատկերի առանձնահատկությունները, միջէթնիկ և ներէթնիկ հարաբերությունների ազդեցությունն աֆղանական հասարակական և քաղաքական համակարգերի վրա: Եվ այս նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝

- Բացահայտել Աֆղանստանի էթնիկ բազմազանության բնական, աշխարհագրական, աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական նախադրյալները:

- Անդրադառնալ ժողովրդագրական գործընթացներին և էթնիկ փոփոխությունները դիտարկել մի քանի տասնամյակի կտրվածքով:
- Կարևորել ցեղային ինստիտուտի դերակատարությունը փուլաբանության և մնացյալ էթնիկ խմբերի հարաբերություններում և այլն:

Էթնիկական գործընթացների ազդեցությունն Աֆղանստանի քաղաքական զարգացումների վրա

Աֆղանստանը բազմազգ երկիր է, որտեղ հաշվում են ավելի քան 3 տասնյակ ազգեր և էթնիկ փոքրամասնություններ¹: Աֆղանստանում էթնո-դավանաբանական հարաբերությունները կայուն չեն և անհանդուրժողականությունն ու դրսևորված առճակատման երևույթներն ունեն աշխարհագրական և պատմական նախադրյալներ: Միջէթնիկ հարաբերությունների լարումը մեծապես սրեց աֆղանական հասարակության ներսում առկա հակասությունը, ըստ էության, ընդգրկելով հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Էթնիկ խմբերի միջև առկա տարածանություններն ու փոխադարձ անվստահությունը հաճախ վերածվում էր բացահայտ թշնամանքի:

Աֆղանական միացյալ պետության ձևավորումը տեղի ունեցավ համաշխարհային տերությունների (Անգլիա և Ռուսաստան) աշխարհաքաղաքական առճակատման պայմաններում և արդյունքում հանգեցրեց էթնիկ համայնքների մասնատմանը: Երկարատև դիմադրության արդյունքում երկրում գերակշռեցին այսպես կոչված «պառակտված ժողովուրդները», որոնց մեծ մասը սահմանամերձ էթնիկ խմբերն էին:

Ըստ արևելագետ Ա. Կնյազևի՝ հնարավոր չէ ստույգ որոշել Աֆղանստանի էթնիկ խմբերից որևէ մեկի թվաքանակը, քանի որ աֆղանական պետության պատմության ողջ ընթացքում, ընդհուպ մինչև 1978 թվականը, մարդահամար չի իրականացվել: Էմիր Աբդուրրահման խանը, ավելի ուշ՝ Խաբիբուլլահ խանը փորձել են իրականացնել մարդահամար՝ հարկային մուտքերի վիճակագրությունը պարզելու նպատակով: Ընտրողական մարդահամարներ իրականացվել են նաև Աֆղանստանի Ժողովրդա-դեմոկրատական կուսակցության օրոք, բայց դրանք հատվածային և պատահական բնույթ էին կրում էին և մոտավոր պատկերացում

¹ Dupree Louis. 1980. Afghanistan. 2nd ed. Princeton, NJ: Princeton University Press. pp 57-65.

տալիս բնակչության թվի շուրջ¹: 1970-90-ական թվականներին հետազոտական շրջանակների կողմից առավել շահարկվող թվաքանակը 16 միլիոնն էր², որը ևս մոտավոր ցուցանիշ է: Այժմ Աֆղանստանի բնակչությունը կազմում է ավելի քան 40 միլիոն և ըստ որոշ միջազգային ժողովրդագրական վիճակագրական կայքերի՝ բնակչության աճի միտումը կշարունակվի՝ տարեկան միջինում 1 միլիոն մարդու կտրվածքով³:

Տարբեր էթնիկ խմբերի (ցեղերի) միջև դիմադրությունը, անհնազանդությունն ու անջատողականությունը փորձեց կարգաբերել աֆղան էմիր Դոստ-Մուհամմադ խանը և Շերալի խանը՝ նպատակ ունենալով վերականգնել պետության միասնությունը⁴: Աֆղանստանի պատմության մեջ ուշագրավ դրվագ է Աֆղանստանի և Պակիստանի սահմանամերձ փոշոններով բնակեցված շրջաններում «Մեծ Փուշթունիստան» ստեղծելու ազգայնական նախագծի մշակումը: 1893 թ-ի նոյեմբերի 12-ին Աֆղանստանի էմիր Աբդուրրահման խանի և Հնդկաստանի բրիտանական գաղութային վարչության արտգործ քարտուղար լորդ Մ. Դյուրանդի միջև ստորագրվեց սահմանագծման մասին համաձայնագիր, որով Բրի-

¹ Князев А. А., Афганский кризис и безопасность Центральной Азии (XIX-начало XXI в.), Душанбе, 2007, с. 110.

² **Barfield T.**, Afghanistan: A Cultural and Political History. Princeton: Princeton University Press, 2010, p. 23.

16 միլիոն բնակչության թիվի ընտրությունը ևս դիտարկելի է հետազոտական շրջանակների համար: 1970-ականների սկզբին Աֆղանստանի կառավարությունը հայտարարեց 20 միլիոն բնակչության առկայության մասին, ինչը ՄԱԿ-ն օգտագործում էր մեկ շնչին ընկնող աղքատության օգնության հաշվարկման համար: Երբ մարդահամարի արդյունքում պարզվեց, որ իրական թիվը ավելի պակաս է և կազմում է 12 միլիոն մարդ, ՄԱԿ-ը սպառնաց կտրուկ կրճատել օգնության ծավալները: Արդյունքում լուծումը փոխզիջումային էր՝ յուրքանցյուր կողմ զիջում էր 4 միլիոն: Վերջնարդյունքում փոխզիջումային թիվը հաստատվեց 16 միլիոն, որը հաջորդ 20 տարիների հետազոտողների կողմից ընդունված թվաքանակն էր:

³ <https://www.worldometers.info/world-population/afghanistan-population/> (Հղված է 17.08.22)

Worldometer-ը տեղեկատու կայք է, որը տրամադրում է իրական ժամանակի հաշվիչներ և վիճակագրություն տարբեր թեմաների վերաբերյալ: Այն պատկանում և շահագործվում է տվյալների Dadax ընկերության կողմից: 2020 թվականին Worldometer-ը մեծ ժողովրդականություն է ձեռք բերել՝ հրապարակելով վիճակագրություն՝ կապված COVID-19 համաճարակի հետ:

⁴ **Слинкин М. Ф.**, Этническая проблема в Афганистане. Вопросы духовной культуры, Исторические Науки, М., 2000, с. 53.

տանական Հնդկաստանի և Աֆղանստանի միջև սահմանը հստակեցվում էր, որը ստացավ «Դյուրանդի գիծ»¹ անվանումը:

1947 թ. օգոստոսին, երբ Բրիտանական Հնդկաստանը բաժանվեց կրոնահամայնական սկզբունքով, մահմեդականների՝ թվային գերակշռությամբ բնակեցված տարածքները փոխանցվեցին Պակիստանին, իսկ «Դյուրանդի գիծը» դարձավ սահմանագիծ² և «Մեծ Փուլթունիստանի» ստեղծմանն արգելակող անջատողական գործոն:

Աֆղանստանում ազգային հարցը հանդիսանում է որոշիչ գործոն, որով պայմանավորված՝ ավելի են բարդանում երկրի սոցիալ-քաղաքական կյանքում առկա պայթունավտանգ իրավիճակները: Աֆղանստանում ներպետական խնդիրները ծագում են պետության բազմազգ բնույթից, որում ավանդաբար գերիշխող դեր է խաղում փուլթունյան ֆեոդալական ազնվականությունը, պետական կառուցվածքի առանձնահատկություններից և անկատարությունից, երկրի տնտեսական և քաղաքական կյանքում այլէթնիկ տարրերի առկայությունից, հիմնական էթնիկ խմբերի հարաբերություններից և այլն: Առանց վերոնշյալ խնդիրների ծագման և պատճառների համապարփակ և խորը ուսումնասիրության, առանց Աֆղանստանում կենտրոնացված պետության ձևավորման ավարտական փուլում էթնիկ խմբերի հարաբերությունների համեմատական վերլուծության, անհնար է հասկանալ ժամանակակից Աֆղանստանի խնդիրները³:

Փուլթունները եվ ցեղային համակարգի ազդեցությունը նրաֆղանական գործընթացների վրա

Համաձայն Աֆղանստանի բնակչության «Աֆղանստան 2006» հետազոտության⁴, որն իրականացվել է Հնդկաստանի Ասիական հիմ-

¹ Fraser-Tytler W. K., Afghanistan. A Study of Political Developments in Central and Southern Asia. 2-nd edition. London - New York - Toronto: Oxford University Press, 1953, pp. 188-190.

² Adamec, Ludwig W., Historical Dictionary of Afghanistan, 3rd Ed. Scarecrow Press, 2003, pp. 407-408.

³ Абдуллоев Р. С., Исторические особенности становления афганской государственности. <http://www.easttime.ru/analitic/2/13/478.html> (Հղված է 17. 08. 2021).

⁴ Опрос населения Афганистана - Афганистан в 2006 г. // Азиатский Фонд, технической помощи со стороны Центр по изучению развивающихся стран (ЦСО, Индия) и афган-

նադրամի, Զարգացող երկրների ուսումնասիրության կենտրոնի և Աֆղանստանի սոցիալ-տնտեսական և գիտական հետազոտությունների կենտրոնի (ACSOR) համատեղ գործակցությամբ՝ բնաչության էթնիկական կազմի թվական տվյալների վերաբերյալ հետևյալ պատկերն է՝ փուշթունները՝ երկրի բնակչության մոտ 40,9 տոկոսը, տաջիկները՝ 37,1 տոկոսը¹: Իսկ 2018 թ-ին «The Asia Foundation»-ի կողմից սոցիոլոգիական հետազոտությունների՝ փուշթունները կազմում են Աֆղանստանի բնակչության 37 տոկոսը², և տոկոսային հարաբերության նվազումը, կարծում ենք, պայմանավորված է մնացյալ էթնիկ խմբերի բարձր վերարտադրողական պոտենցիալի իրացմամբ:

Աֆղանստանի հիմնական տարածքը բնակեցված է **փուշթուններով**, իսկ երկրի կենտրոնական նահանգները՝ տաջիկներով և հազարաներով, մեծաթիվ փուշթուններ բնակվում են Պակիստանի հյուսիսարևմտյան սահմանամերձ նահանգներում: Ըստ Թ. Բարֆելդի՝ «փուշթունները ժամանակակից Աֆղանստանում գերակշռող էթնիկ խումբն են սկսած 18-րդ դարի երկրորդ կեսից և ներկայումս կազմում են երկրի բնակչության մոտ 40 տոկոսը»³: Փուշթուններն ունեն իրենց լեզուն, որն էապես տարբերվում է դարիից՝ պարսկերենի բարբառից, որով խոսում է երկրի բնակչության մեծամասնությունը:

Փուշթունների ամենամեծ ցեղային միավորումները դուրանի (մինչև 1747 թ-ը կոչվում էին աբդալի) և գիլզային են: Աֆղանստանում տարածված ավանդության համաձայն՝ դուրանիի տոհմաձառը սկսվում է Սարբանից, նրա որդի Բարաքից և թոռներից, որոնց անուններով էլ անվանակոչվել են դուրանիի առանձին ցեղերը⁴: Դուրանիի ցեղային միավորման հիմնական բնակավայրերը Աֆղանստանի հարավարևմտյան և

ский Центр социальноэкономических и научно-исследовательских мнений (ACSOR). – Кабул, 2006.

¹ Ըստ Թ. Բարֆելդի՝ տաջիկները կազմում են Աֆղանստանի բնակչության ոչ թե 37, այլ մոտ 30 տոկոսը և տարբերակվում են որպես ոչ ցեղային պարսկախոս սուննի մահմեդականներ:

Barfield T., Afghanistan: A Cultural and Political History, p. 26.

² Afghanistan in 2018. A Survey of the Afghan People (PDF). The Asia Foundation. 2018. p. 283.

³ **Barfield T.**, Afghanistan: A Cultural and Political History, p. 24.

⁴ **Рейснер И. М.**, Развитие феодализма и образование государства у афганцев, с. 34-35, 52.

արևմտյան նահանգներն են, իսկ թիվը գերազանցում է 3 միլիոնը: Նրանց բաժանված են երկու հիմնական ճյուղերի՝ զիրակ (բնակվում են Քանդահարի շրջանում) և փանջպայ (բնակեցնում են Գիրիշկա և Շինդանդ շրջանները) ենթացեղախմբերի: Առաջին ենթացեղախմբի մեջ ներառված են բարաքզայի ցեղն իր տոհմներով՝ պոպալզայի, աչակզայի, ալկոզայի, մուսազայի, սադոզայի, մուհամմադզայի, իսկ երկրորդի մեջ՝ նուրզայի, ալիզայի, իսհակզայի, մակու և խուգիանի տոհմերը¹:

Ըստ ծագումնաբանության՝ գիլզայի ցեղային միավորումը ծագում է Բետանային և մաս կազմում բատանի խմբի: Վերջիններս, ինչպես դուրանիները, բաժանված են երկու հիմնական ճյուղերի՝ Թուրանի (ներառում է Թոհի, Հոթակի և այլ ցեղեր) և Բուրանի (Սուլեյմանխել, Ալիխել, Անդար, Թարակի և այլ ցեղեր) ցեղերը: Գիլզայի ցեղային միավորման անդամների ընդհանուր թիվը գերազանցում է երկու միլիոնը²:

Փուլթունների ճնշող մեծամասնությունը հանաֆիական ուղղության սուննի մահմեդականներ են, իսկ միայն մի փոքր մասը՝ հիմնականում արևելաբնակ (օրինակ ջաջիները) դավանում են շիա իսլամ:

Աֆղանական (փուլթուական) ցեղերը պահպանել են ցեղային համակարգը, ունեն իրենց իշխանության մարմինները, առաջնորդները, ավագանին և զինված կազմավորումները: Եվ պետք է շեշտել, որ պատմական ու կրոնական առանձնահատկություններով պայմանավորված՝ ցեղային կազմակերպությունները հսկայական ազդեցություն ունեն հասարակության վրա: Բազմաթիվ ցեղեր (հատկապես փուլթուները), չունենալով պետական կենտրոնացված իշխանության կարիք, իրենց համարում են ինքնաբավ: Ըստ հետազոտող Ի. Կատկովի՝ վերջիններս ունեն իրենց հասարակական մարմինները, ցեղային իշխանությունը (ջիրգա), ավագանին, զինված կազմավորումները և իրենց ցեղային իրավունքները (Փուլթունվալի)³: Մինչ այժմ Աֆղանստանում կան ավելի քան 100 խոշոր ցեղեր, որոնք իրենց հերթին բաժանվում են առանձին տոհմերի (կլանների) և ընտանիքների:

¹ Նույն տեղում:

² **Босворт К. Э.**, Мусульманские династии. Справочник по хронологии и генеалогии. Перев. с англ. – М.: Наука, 1971, с. 274.

³ **Катков И. Е.**, Социальные аспекты племенной организации пуштунов. – Афганистан. История, экономика, культура. М., 1989, с. 53-56.

Աֆղանստանի էթնիկ փոքրամասնությունները

Աֆղանստանի հյուսիսային նահանգները բնակեցված են երեք հիմնական էթնիկական խմբերով, որոնք անմիջականորեն կապ ունեն միջինասիական ծագման այլ խմբերի հետ: Այսպես, Բադախշան նահանգում բնակվող թուրքմենները կապված են Թուրքմենստանի, ուզբեկները՝ Ուզբեկստանի, իսկ երկրի կենտրոնական և հյուսիսարևելյան շրջաններում բնակվող տաջիկները՝ Տաջիկստանի հետ:

Տաջիկները կազմում են բնակչության մեկ քառորդից մինչև մեկ երրորդը¹ (վերջին ժողովրդագրական ուսումնասիրությունները տատանվում է 37 տոկոս ցուցանիշի վրա²), որոնք իրենց հերթին բաժանվում են առանձին էթնաշխարհագրական կամ ազգագրական խմբերի («քաբուլի», «հերթի», «փանջերի», «բադախշի»)³, որոնք բարբառագիտական և մշակութային առանձնահատկություններից բացի, տարբերվում են սոցիալական զարգացման մակարդակով:

Հազարաները էթնիկ խումբ են, բնակչության թվով զբաղեցնում են երրորդ տեղը, կազմում են Աֆղանստանի բնակչության մոտ 15 տոկոսը (որոշ հաշվարկներով 12 տոկոսը⁴) և վերջիններիս հայրենիքը Հինդուկուշի կենտրոնական մասում գտնվող Հազարաջաթ անունով հայտնի տարածաշրջանն է⁵: Հազարաները շիա մահմեդականներ են, թեև խոսում են պարսկերենի բարբառներով, բայց իրենց ծագումը վերագրում են Իրանը նվաճած մոնղոլներին: Ըստ հազարաների լեգենդների՝ իրենք Չինգիզ խանի մոնղոլ ռազմիկների ժառանգներն են: Պետք է նշել, որ մոնղոլական և թյուրքական նվաճումների ու էթնոշարժերի արդյունքում նվաճողները ակտիվ ասիմիլիացիոն գործընթացներ էին իրականացնում ենթակա ժողովուրդների նկատմամբ և հենց այս ժամանակաշրջանից

¹ Афганистан: война и проблемы мира. – М.: Институт востоковедения РАН, 1998, с. 6.

² "Afghanistan in 2019 – A survey of the Afghan people" (PDF). Kabul, Afghanistan: The Asia Foundation. p. 277.

³ Barfield T., Afghanistan: A Cultural and Political History, p. 26.

⁴ Хамгаев Александр, "Этнополитический портрет Афганистана: единство или Федерализм?", Россия и мусульманский мир, No. 4, 2004, с. 146.

⁵ Barfield T., Afghanistan: A Cultural and Political History, p. 26.

Առավել մանրամասն տե՛ս Mousavi, Sayed Askar. 1997. The Hazaras of Afghanistan: An historical, cultural, economic, and political study. New York: St. Martin's Press.

կիրառության մեջ է ռազմական և վարչառազմական նշանակություն ունեցող «հազարա» (պարսկերեն՝ հազարյակ) տերմինը¹: Ըստ Ի. Ռայսների՝ մոնղոլների ցեղերը բաժանում էին ըստ հազարյակների, որտեղից էլ սկիզբ առավ «հազարա» էթնոանվանումը²: Հազարացիների միջև ցեղային բաժանումը պահպանվել է մինչև այսօր, դասվում են Աֆղանստանի էթնիկ հիերարխիայի վերջին հորիզոնականին և համակարգված կերպով դուրս են մնում գրեթե բոլոր պետական պաշտոններից և զուրկ են կրթական հնարավորություններից:

Ուզբեկները բնակեցնում են Աֆղանստանի հյուսիսային շրջանները³ և կազմում են բնակչության մոտ 9,2 տոկոսը⁴: Վերջիններս սուննի թուրքալեզու խմբեր են, որոնք սերում են քոչվոր ցեղային համադաշնություններից, որոնք մի շարք ալիքներում գաղթել են Կենտրոնական Ասիայից⁵: Նախկինում ուզբեկները բաժանված էին առանձին ցեղերի, որը նստակեցության անցմանը զուգընթաց վերացավ (18-19-րդ դարերի սկզբին), բայց որոշ ուզբեկների մոտ պահպանված են ցեղային կառույցները (ընդհանուր առմամբ պահպանվել է ավելի քան 90 ցեղ և կլան):

Աֆղանստանի հյուսիսային շրջանների կենտրոնական և արևմտյան մասերում, աֆղանա-թուրքմենական սահմանի երկայնքի Բալխ, Ջաուզջան, Ֆարյաբ, Թաղար, Կինդուզ, Բագդիզ, Հերաթ նահանգներում բնակվում են ավելի քան 400 հազար **թուրքմեններ**⁶: Թուրքմենական ցեղերը (թայֆա) բաժանված են տոհմների և ավելի փոքր միավորների⁷: Թուրքմենների դերակատարումը մեծ է Աֆղանստանի տնտեսության մեջ⁸:

¹ **Темирханов Л.**, Хазарейцы (Очерки новой истории), М.: Наука, 1972, с. 15-13.

² **Рейснер И. М.**, Афганистан, М.: ОГИЗ Гос. изд-во геогр. лит-ры, 1946, с. 32.

³ Афганистан: война и проблемы мира, с. 6.

⁴ Опрос населения Афганистана - Афганистан в 2006 г. // Азиатский Фонд, технической помощи со стороны Центр по изучению развивающихся стран (ЦСО, Индия) и афганский Центр социальноэкономических и научно-исследовательских мнений (ACSOR). – Кабул, 2006.

⁵ **Barfield T.**, Afghanistan: A Cultural and Political History, p. 27.

⁶ **Пуляркин В. А.**, Афганистан. Экономическая география. – М.: Мысль, 1964, с. 48

⁷ **Логашова Б. Р.**, Этнокультурная ситуация в Афганистане // Расы и народы. 1986. – Выпуск 16. – М.: Наука, 1986, с. 124.

⁸ **Barfield T.**, Afghanistan: A Cultural and Political History, p. 27.

Աֆղանստանի ազգագրական ներկայանակում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում նաև թվաքանակով փոքր էթնիկ խմբերը, որոնց քաղաքական և կազմակերպական դերակատարումը երկրի հասարակական-քաղաքական կյանքում այնքան էլ նկատելի չէ: Փոքր էթնիկ խմբերը բավականին բազմազան են և ներկայացնում են երկրի բնակչության ընդամենը 3 տոկոսը կամ ավելի պակաս: Առանձին-առանձին, նրանց բնակչությունը տատանվում է մեկից երկու հարյուր հազարի սահմաններում: Ըստ Թ. Բարֆելդի՝ «այս խմբերից ոմանք, սակայն, ունեցել են իրենց թվաքանակից առավել պատմական նշանակության: Աֆղան կառավարիչները հաճախ հետևում էին հին քաղաքական ռազմավարությանը և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին կառավարությունում և բանակում բարձր պաշտոնների նշանակում: Համարվում էր, որ նրանք ավելի հավատարիմ կլինեն, քանի որ չունեն քաղաքական հենարան»¹:

Օրինակ, **այմաքները** ցեղային կազմակերպությամբ սուննի մահմեդականներ են, որոնք խոսում են պարսկերեն, բայց երբեմն պնդում են իրենց թուրքական ծագման մասին: Հավանաբար նրանց թիվը մոտ կես միլիոն է, չնայած նրանց թվի շուրջ գնահատականները տարբեր են, անգամ վիճարկելի է վերջիններիս մեկ ցեղային կազմակերպությամբ դիտարկելը²:

Նուրիստանցիներն ու փաշայները բնակվում են Քաբուլից հյուսիսարևելք ընկած լեռնային շրջաններում և մինչև 19-րդ դարի վերջը պահպանում էին իրենց հեթանոսական կրոնն ու յուրահատուկ անասնապահական մշակույթը: Միայն 1895 թ-ին վերջիններիս հնազանդեցումից հետո բռնի ընդունեցին մահմեդականություն, իսկ Քաբուլ տեղափոխվածների ժառանգները դարձան կառավարության և զինված ուժերի կադրային հենարանը: Նրանց լեզուն կապ չունի Աֆղանստանի այլ լեզուների հետ³: Փաշայները մշակութային առումով նման են նուրիստանցիներին, սակայն պահպանում են իրենց ինքնությունը և ավելի վաղ են ընդունել իսլամը:

Ղզլբաշները⁴ սկզբնապես կազմում էին շիա թուրքական զորամիա-

¹ Նույն տեղում, էջ 28:

² Նույն տեղում, էջ 27-28:

³ Նույն տեղում, էջ 28-29:

⁴ Ղզլբաշ անվանումը գալիս է ռազմիկների սովորությունից, որոնք տասներկու շիա իմամների պատվին կրում էին տասներկու շարք կարմիր կտորներով չալմաներ:

վորումները և 18-րդ դարակեսին խոռվությունների շրջանում նպաստեցին աֆղանական պետության կայացմանը: Նրանք կենսական դեր խաղացին 18-րդ դարավերջի և 19-րդ դարի սկզբին ցեղային ապստամբություններում՝ որպես աֆղանական պետության պաշտպաններ: Այսօր դժբաժնեները՝ պարսկախոս քաղաքային բնակչություն են և կառավարման ու տնտեսության մեջ ունեն առանցքային դերակատարում¹:

Աֆղանստանի իսլամադավան էթնիկ փոքրամասնությունների թվին են պատկանում նաև **բելուջները**², **արաբները**, **պամիրները** կամ «**լեռնային տաջիկները**»³, **դրոզները**, որոնք երկրի հարասարական-քաղաքական զարգացումների վրա լուրջ ազդեցություն չունեն և փոքր թվով ոչ իսլամադավաններ⁴:

Աֆղանական հասարակության տարասեռությունը և ցեղային ինստիտուտի գերակայությունը

Պետք է նշել, որ աֆղանական փակ համայնքներն ու կլանները, ավանդաբար, ներկայանում են որպես արդյունավետ պետականաշինության ամենալուրջ խոչընդոտ, քանի որ այստեղ գործում են ոչ թե քաղաքական և նման գործոնները, այլ ազգակցական և հովանավորչական հարաբերությունները: Իրենց ռազմական կազմակերպվածության շնոր-

Moojan Momen, *An Introduction to Shi'i Islam*, Yale Univ. Press, 1985, pp. 101-107. ISBN 0-300-03499-7

¹ **Barfield T.**, *Afghanistan: A Cultural and Political History*, p. 29.

Afghanistan: A Country Study. Editors: Richard F. Nyrop, Donald M. Seekins. Baton Rouge: Claitor's Law Books and Publishing Division, 2001, p. 104.

² Տե՛ս **Пикулин М. Г.**, *Белуджи*. - М.: Изд-во Восточной литературы, 1959.

³ **Foltz Richard**, *A History of the Tajiks: Iranians of the East*. New York: I.B. Tauris. 2019. p. 183. ISBN 978-1-83860-446-2.

⁴ Barfield T., *Afghanistan: A Cultural and Political History*, p. 30.

Ինչպես նշում է Բարֆելդը՝ Աֆղանստանում բնակվում են նաև ոչ մահմեդականներ, գուցե տասից քսան հազար սիկիեր և հինդուիստներ, որոնք երկար ժամանակ բնակվում էին Քաբուլում և մի քանի այլ քաղաքներում: Նրանք պատմականորեն կարևոր դերակատարում են ունեցել Աֆղանստանի միջազգային առևտրում և դեռևս մեծ դեր են խաղում արժույթային շուկայում: Մինչև 20-րդ դարի կեսերը Աֆղանստանն ուներ փոքր, բայց հին հրեական համայնքներ Քաբուլում, Հերաթում և հյուսիսային քաղաքներում: Աֆղանստանի հրեաների մեծ մասը 1950-ականներին արտագաղթել են Իսրայել, և համայնքն այժմ գոյություն չունի:

հիվ աֆղանական ցեղերը կարողացան պահպանել իրենց համայնական կենսաձևերը և ինքնուրույնությունը: Նրանք ներկայանում են որպես ինքնուրույն էթնիկ և մշակութային համայնք: Վերջիններիս քաղաքական և իրավական ինքնուրույնությունն իր արտահայտությունն է գտել Փուշթունվալիիում՝ սովորութային «պատվո կանոնագրքում»¹:

Այս կամ այն ցեղին տարածք հատկացնելը վկայում է աֆղանների շրջանում ցեղային կազմակերպության էվոյուցիոն զարգացման մասին: Ավելին, ցեղերի հավակնությունները տարածվում էր նաև տարածքի բոլոր ռեսուրսներին նկատմամբ և նման ընկալումները հանգեցրին ռեսուրսների համար սուր պայքարի՝ ինչպես ցեղերի, այնպես էլ ցեղերի և պետության միջև²: Համաձայն Յու. Լալետինի՝ «պետությունը և փուշթուն ցեղերը հասարակական-քաղաքական փոխներթափանցված ինստիտուտներ են: Ցեղերը հակադրվում են պետության՝ նրա բաղկացուցիչ մասերին»³: Որոշ արևմտյան հետազոտողների աշխատություններում աֆղանական հասարակության ցեղային բաժանումն արտահայտված է «լեռնային» և «հովտային» ցեղեր բնորոշմամբ: Մ. Բերիին, ընդգծելով լեռների և հովիտների հակադրությունը, նշում է, որ հովիտները խորհրդանշում են ռոռզումն ու բռնատիրությունը, իսկ լեռները՝ դիմադրությունը, ազատության սերն ու զենքի պաշտամունքը⁴: Միևնույն ժամանակ, լեռնային ցեղերը հաջողությամբ դիմակայում են «հովտային» բռնակալներին, սակայն չունեն քաղաքական վարչակարգեր ձևավորելու ավանդույթ ու մշակույթ, իսկ խաների հովանավարությունը ցեղային կառույցի անդամների վրա հաստատվում է ընդհանուր հարստության վերաբախման վրա⁵:

¹ Տե՛ս **Оришев А. Б.**, «Пуштунвали» - история жизни и философия пуштунов // Вестник экспериментального образования, No. 2, 2015. <https://bit.ly/3UPX1Lp> (Հղված է 24. 08. 21).

Миронов Л., «Пуштунвали» - кодекс чести и достоинства // Азия и Африка сегодня, № 10, 1995, с. 55-58.

² Лалетин Ю.П., Политсистема Афганистана как идеальный тип: воздействие племён // Государство и племя, М., 2008, с. 69.

³ **Лалетин Ю. П.**, Государство и племя в политической системе Афганистана, <https://mgimo.ru/upload/iblock/6e1/6e17b3484161df7aeb08cd999f170174.pdf> (Հղված է 15. 08. 2021)

⁴ **Michael Barry**, La resistance afghane. Paris, 1989, p. 143, 146.

⁵ Նույն տեղում:

Եթե ամբողջացնենք, պետությունը շարունակում էր պահպանել ցեղային միավորման առանձնահատկությունները և, ըստ էության, չհաղթահարեց ցեղային կազմակերպության համակարգը: Պատմականորեն ձևավորվել էր իշխանության իրացման երկակի մոդել՝ կենտրոնական իշխանությունը և ցեղերը, որոնք ևս ունեին ինքնակառավարման որոշակի մասնաբաժին: Պետությունն ու ցեղը չկարողացան ճնշել միմյանց և արդյունքում սկսեցին աջակցել ու ապավինել միմյանց: Հայեցակարգային առումով, լինելով «կոնֆլիկտային» հարաբերությունների մեջ, գործնականում աֆղանական ցեղերն ու պետությունը դիալեկտիկորեն կապված են որպես ամբողջության մասեր:

Աֆղանական բոլոր տիրակալները ամեն կերպ պայքարում էին առանձին ցեղերի անջատողականության դեմ և այդ պայքարում կարող էին ապավինել գվարդիայի, կառավարչական համակարգի ներկայացուցիչների և մահմեդական հոգևորականության վրա: Պատմահամեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ «20-րդ դարի 70-ական թվականներին ցեղերը շարունակում էին իրենց կազմակերպական ներուժը: Նրանք կորցնում էին իրենց յուրօրինակ կարգավիճակը, արտոնությունները, ինչը չէր կարող չառաջացնել առաջնորդների դիմադրությունը»²: Նման քաղաքականության արդյունքում, խախտվեց ուժերի հավասարակշռությունը կենտրոնի (կառավարություն) և ծայրամասի (ցեղեր) միջև, առաջացավ հակասությունների մեկ այլ, թեև ոչ հիմնական օբյեկտ, քաղաքացիական բախումներ, պատերազմ, պետության կազմալուծում և ցեղային ռազմական ներուժի և փաստացի անկախության վերականգնում:

Միևնույն ժամանակ, արդիականացման բոլոր փորձերը (Ամանուլլայ խանի, Մ. Դաուդի, Աֆղանստանի Ժողովրդա-դեմոկրատական կուսակցության իշխանության օրոք) հանգեցրին հակակառավարական ապստամբությունների, խռովությունների և դավադրությունների³: Ներպե-

¹ **Anderson J. M.**, Khan and Khel: Dialectics of Pakhtan Tribalism.- in: R. Tapper (ed.). The Conflict of Tribe and State in Iran and Afghanistan. London-Canberra-New York, 1983, p. 119.

² **Hyman A.**, Afghanistan under Soviet Domination, 1964-1981. – N.Y., 1982, pp. 129-130.

³ **Андреев С.**, Афганистан: страна без государства // Политический журнал. – М., 2004. № 31 (34), с. 59.

տական հակամարտությունները հանգեցրին աֆղանական այլ էթնիկ խմբերի ռազմական կազմակերպմանը, որոնք հիմնականում պահպանում էին ցեղային բնույթը, որի մեխը պետական համակարգից անկախ հասարակական կարգի, ավանդույթների պահպանումն էր: Փուլթունների շրջանում այդ դերակատարումը վերապահված էր «բարոյական օրենսգրքին»՝ Փուլթունվալին:

Եզրակացություն

Ի մի բերելով վերոգրյալը՝ հանգել ենք հետևյալ եզրահանգումների՝

1. Էթնիկ պատկանելիությամբ պայմանավորված կոնֆլիկտային հիմնախնդիրները հատուկ են բոլոր բազմէթնիկ հասարակություններին, չնայած այն հանգամանքին, որ նմանօրինակ հիմնախնդիրներն առավել հիմքային և առանցքային հետևանքներ են թողնում հետկոնֆլիկտային, վերականգման փուլ ապրող հասարակություններում, ինչպիսի վառ օրինակ է ներկայիս Աֆղանստանը:
2. Երկրի կտրվածությունը լեռնային և գետային բարդ ցանցով, մշակութային համար պիտանի հողերի սակավությունը, կլիմայական կտրուկ փոփոխությունները, ըստ էության, խոչընդոտեցին Աֆղանստանի քաղաքական կայուն զագացմանն ու էթնիկ համախմբմանը: Աֆղանական պետության ներկա սահմանների ձևավորման գործում մեծ է վերջինիս բուֆերային դերակատարությունը ռուսական և բրիտանական կայսրությունների միջև, որի արդյուքնում աֆղանական ազգային շահերը երկրորդացվեցին կայսերապետական շահերին: Արտաքին միջամտության անմիջական վտանգը ևս խոչընդոտեց պետականաշինական գործընթացին լիարժեք իրացմանը՝ քաղաքական զարգացումներին հաղորդելով հատվածային, դիպվածային բնույթ:
3. Փուլթունները կազմում են Աֆղանստանի էթնիկ համակազմի դոմինանտ տարրը և անմիջական ազդեցություն են ունեցել (ունեն) աֆղանական պետության և հասարակության արդիականացման բոլոր շրջափուլերում՝ սկսած Դուրրանիի կայսրությունից մինչև Թալիբանի վերադարձը իշխանության: Սակայն փուլթունների շրջանում ցեղային-կլանային հարաբերությունները դարերի ընթացքում ինտիտուցիոնալ բնույթ հաղորդեցին տոհմացեղային գերակայությանը՝ ուղիղ խոչընդոտ հանդիսանալով աֆղանական պետականաշինության, կենտրոնացված պետականության գործառույթների իրացման համար:

4. Փուլթունական էլիտայի և էթնիկ փոքրամասնությունների հարաբերությունները դարերի ընթացքում կրել են ոչ միանշանակ բնույթ: Որոշ էթնիկ խմբերի ներկայացուցիչներին փուլթուններն ավանդաբար շնորհել են պաշտոններ, զինվորական կոչումներ (օրինակ՝ ղզբաշներ, նուրիստանցիներ, փաշայներ, թուրքմեններ), իսկ տաջիկներին, հազարներին՝ զրկել որոշ իրավունքներից, հնարավորինս հեռու պահել կառավարչական գործունեությունից: Դոմինանտ էթնիկ խմբի և մնացյալ էթնիկ խմբերի միջև հարաբերությունների ճգնաժամը ցայտուն դրսևորվեց 20-րդ դարի 70-ական թթ-ի վերջից, իսկ 80-ականներին վերաճեց քաղաքացիական պայքարը՝ հանուն իշխանության և ռեսուրսների:
5. Պետք է նշել, որ աֆղանական ճգնաժամի և նրա շուրջ ձևավորված գործընթացներում էթնիկական գործոնը միակը չէ, գործոնները բազմաթիվ և բազմազան են՝ աշխարհագրական դիրքը, տարածաշրջանային նշանակությունը, պատմական հիշողությունը, էթնիկ պատկերացումները, կրոնը, ցեղերի ռազմական և սոցիալական ինստիտուտների ավանդական առկայությունը, անարդյունավետ պետական կառավարումը, քաղաքական իշխանության և ռեսուրսների հասանելիության համար անզիջում պայքարը և այլն:

Բանալի բառեր՝ Աֆղանստան, փուլթուններ, էթնիկական պարկանելիություն, աֆղանական ճգնաժամ, ջիրգա, Փուլթունվալի, ցեղային ինստիտուտներ, «Դյուրանդի գիծ», վերարտադրողական պոտենցիալ, բուֆերային դերակատարություն:

ХАРАКТЕРИСТИКИ ЭТНИЧЕСКОГО КОНТЕКСТА АФГАНИСТАНА

Владимир Погосян

Ключевые слова: Афганистан, пуштуны, этнос, афганский кризис, Джирга, Пуштунвали, племенные институты, «линия Дюрана», репродуктивный потенциал, буферная роль.

В современном Афганистане проблемы национально-этнического характера многочисленны и разнообразны и непосредственно затрагивают внутри- и внешнеполитические проявления и процессы. Большая продолжительность гражданской войны, выраженные противоречия в межэтнических отношениях,

наличие культуры группово-родовых отношений придают современность изучению этнических процессов в Афганистане.

В данной статье мы попытались обратиться к этническим особенностям, межэтническим и внутриэтническим процессам, которые также создают фундаментальные условия для продолжения конфликта. Подробно рассматривается влияние этнических процессов на политические процессы, особенности пуштунов и их племенного строя, статус этнических меньшинств, неоднородность афганского общества и главенство племенного института.

Следует отметить, что этнический фактор не является единственным фактором афганского кризиса и окружающих его процессов, факторы многочисленны и разнообразны: географическое положение, региональное значение, историческая память, этнические представления, религия, традиционное существование военных и социальные институты племен, неэффективное государственное управление, политическая беспощадная борьба за доступ к власти и ресурсам и т. д.

CHARACTERISTICS OF THE ETHNIC CONTEXT OF AFGHANISTAN

Vladimir Poghosyan

Keywords: *Afghanistan, Pashtuns, ethnicity, Afghan crisis, jirga, Pashtunwali, tribal institutions, "Durand line", reproductive potential, buffer role.*

In modern Afghanistan, the problems of national-ethnic nature are numerous and diverse and directly affect domestic and foreign political manifestations and processes. The long duration of the civil war, the marked contradictions in the inter-ethnic relations, the existence of the culture of group-clan issues give modernity to the study of ethnic processes in Afghanistan.

In this article, we have tried to address the ethnic characteristics, inter-ethnic and intra-ethnic processes, which also create fundamental conditions for the continuation of the conflict. The impact of ethnic processes on political developments, the features of the Pashtuns and the latter's tribal system, the status of ethnic minorities, the heterogeneity of the Afghan society and the supremacy of the tribal institution is partially addressed.

It should be noted that the ethnic factor is not the only factor in the Afghan crisis and the processes surrounding it, the factors are numerous and diverse: geographical location, regional importance, historical memory, ethnic perceptions, religion, the traditional existence of military and social institutions of tribes,

inefficient state administration, political relentless struggle for access to power and resources, etc.

Վլադիմիր Պողոսյան - ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոնի հայցորդ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս

Владимир Погосян - соискатель кафедры Всеобщей истории ЕГУ, преподаватель кафедры Истории Армении и социальных наук иджанского филиала ЕГУ

Vladimir Poghosyan - applicant of YSU Chair of World History, lecturer at the Chair of Armenian History and Social Sciences, Ijevan Branch YSU

(vladimir.poghosyan@ysu.am) 094 335735